

ՊԱՏԺԻ ԱՆՆԱՏԱԿԱՆԱՅՈՒՄ. ՕՐԵՆԸԸ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱՆ

Պատժի հասկացության եւ նպատակների ընդհանուր բնութագիրը արված է ՆՆ Քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածում. պատիժը ոչ միայն մեղքի քավումն է կատարված հանցագործության համար, այլեւ նպատակ ունի դատապարտվածներին ուղղել եւ վերադաստիարակել աշխարհանքին ազնվորեն վերաբերվելու, օրենքները ճշտորեն կատարելու, համակեցության կանոնները հարգելու ոգով, ինչպես նաեւ կանխել նոր հանցագործությունների կատարումը ե՛ւ դատապարտյալների, ե՛ւ այլ անձանց կողմից: Պատիժը նպատակ չունի ֆիզիկական փանջանքներ պարճառել կամ սպորացնել մարդկային արժանապարվությունը:

Պատժի վերաբերյալ քրեական քաղաքականությունն ունի երկու հիմնական ուղղություն. առաջին՝ խիստ պատիժների սահմանում ռեցիդիվիստների եւ ծանր հանցագործություններ կատարած անձանց նկատմամբ եւ երկրորդ՝ պատժի փոխարինումը ներգործության այլ միջոցների այն անձանց նկատմամբ, ովքեր կատարել են հասարակական բարձր վրանգավորություն չներկայացնող եւ կամ ոչ ծանր հանցագործություններ:

Պատիժ սահմանելու եւ կիրառելու հիմքը հանդիսանում է միայն հանցագործությունը: Գործող քրեական օրենսդրությունը սահմանում է պատիժների համակարգ (հոդված 21):

Նանցագործություններ կատարած անձանց նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ հիմնական պատիժները՝ ազատագրկում, ուղղիչ աշխարհանքներ առանց ազատագրկման, որոշակի պաշտոններ վարելու կամ որոշակի գործունեությամբ զբնդվելու իրավունքից զրկում, փուզանք, պաշտոնանկություն, պարճառած վնասը հարթելու պարտականություն դնելը, հասարակական պարսավանք, արքայաբաժնի: Ժամկետային զինվորական ծառայողների նկատմամբ կարող է նաեւ կիրառվել պատիժ՝ կարգապահական գումարտակ ուղարկելու ձեռով: Թափառաշրջիկությամբ կամ մուրացկանությամբ զբաղվող անձանց կամ այլ պորպաբույժ կյանք վարող, ալիմենար վճարելուց կամ երեխաներին պահելուց չարամտորեն խուսափող, ինչպես նաեւ անձնագրային համակարգի կանոնները խախտող անձանց նկատմամբ կարող է նաեւ կիրառվել պատիժ՝ դաստիարակչական աշխարհանքային պրոֆիլակտորիում ուղարկելու ձեռով:

Բացի հիմնական պատիժներից, դատապարտյալների նկատմամբ կարող են կիրառվել հետևյալ լրացուցիչ պատիժները՝ գույքի բռնագրավում, գինվորական կամ հատուկ կոչումից զրկում, ծնողական իրավունքից զրկում: Աքսորը, արտաքսումը, որոշակի պաշտոններ վարելու կամ որոշակի գործողությամբ զբաղվելու իրավունքից զրկելը, փուզանքը, պաշտոնանկությունը, պարճառված վնասը հարթելու պարտականություն դնելը կարող են կիրառվել որպես հիմնական եւ լրացուցիչ պատիժներ:

Ղափարանը Զրեական օրենսգրքի դրույթներին ճիշտ համապատասխան պատիժ նշանակում է օրենքի այն հոդվածի սահմաններում, որը պատասխանավորություն է նախատեսում կատարված հանցագործության համար: Օրենսգրքի 34-րդ հոդվածում, որը նվիրված է պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներին, նշվում է. «Պատիժ նշանակելիս դատարանը... հաշվի է առնում կատարված հանցագործության բնույթն ու հասարակական վրանգավորության աստիճանը, հանցավորի անձնավորությունը եւ գործի այն հանգամանքները, որոնք մեղմացնում կամ ծանրացնում են պատասխանավորությունը»: Նենց այդ հոդվածն է ձեւավորում օրինականության ու պատժի անհատականացման սկզբունքները, որոնք հանդիսանում են քրեական իրավունքի հիմնարար սկզբունքները: Եվ պատժի նպատակները՝ դատապարտյալների ուղղումն ու վերադաստիարակումը, ինչպես նաեւ նրանց եւ այլոց կողմից նոր հանցագործությունների կանխարգելումը (հանցագործությունների հատուկ եւ ընդհանուր պրեվենցիա), իրականացվում են այս իսկ սկզբունքներով:

Պատժի անհատականացումը, որպես պատիժ նշանակելու ինքնուրույն սկզբունք, սերտորեն կապված է քրեական իրավունքի այլ սկզբունքների հետ: Ավելին, քրեական իրավունքի բոլոր սկզբունքներն իրենց արտացոլումն են գտնում պատժի անհատականացման գործընթացում:

Պատասխանավորությունը մեղմացնող հանգամանքներ են համարվում կատարված հանցագործության վնասակար հետեւանքները հանցավորի կողմից կանխելը կամ հասցրած վնասը կամովին հատուցելը կամ պարճառած վնասը վերացնելը, հանցագործությունն անձնական կամ ընդհանրական ծանր հանգամանքների զուգորդման հետեւանքով կատարելը, հանցագործությունը սպառնալիքի կամ հարկադրանքի ազդեցության փակ կամ նյութական կամ այլ կախյալ վիճակում գտնվելու հետեւանքով կատարելը, հանցագործությունը փուժողի անօրինական գործողությունների հետեւանքով առաջացած հոգեկան խիստ հուզմունքի ազդեցության փակ կատարելը, հանցագործությունը հանրորեն վրանգավոր ուրնձգությունից պաշտպանվե-

լիս կապարելը, թեկուզե անհրաժեշտ պաշտպանություն սահմանելու անցումով, հանցագործությունն անչափահասի կողմից կապարելը, հանցագործությունը հղի կնոջ կողմից կապարելը, անկեղծորեն գղջալը կամ մեղայականով ներկայանալը, ինչպես նաև հանցագործությունը բացելուն ակտիվորեն աջակցելը: Պափիժ սահմանելիս դափարանը կարող է հաշվի առնել նաև այլ մեղմացուցիչ հանգամանքներ, որոնք օրենքում մատնանշված չեն (հոդված 35):

Պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքներ են համարվում՝ հանցագործությունը նախկինում որեւէ հանցագործություն կատարած անձի կողմից կապարելը (դափարանն իրավունք ունի, նայած առաջին հանցագործության բնույթին, այն չհամարել պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք), հանցագործությունը կազմակերպված խմբի կողմից կապարելը, հանցագործությունը շահադիփական կամ այլ սպոր դրդումներով կապարելը, հանցագործությամբ ծանր հետեւանքներ պատճառելը, հանցագործությունը փոքրահասակի, զառամյալի կամ անօգնական վիճակում գտնվող անձի նկատմամբ կապարելը, կամ այն անձի կողմից կապարելը, որը պարտավոր էր հափուկ հոգ փանել փուժողի մասին, կամ եթե այն կատարվել է փուժողի նյութական կամ այլ կախյալ վիճակն օգտագործելով, անչափահասներին հանցագործություն կատարելուն դրդելը կամ անչափահասներին հանցագործության մասնակցելու ներգրավելը, հանցագործությունն առանձին դաժանությամբ կամ փուժողի նկատմամբ ծաղրուծանակով կապարելը, հանցագործությունը հասարակական աղետի պայմանների օգտագործումով կապարելը, հանցագործությունը հանրության համար վրանգավոր եղանակով կապարելը, հանցագործությունն առանձնապես վրանգավոր ռեցիդիվիստի կողմից կապարելը, հանցագործությունը հարբած վիճակում կապարելը (դափարանն իրավունք ունի դա պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք չհամարել, ելնելով հանցագործության բնույթից), ակնհայտ անմեղ անձին ամբաստանելը, նոր հանցագործություն կատարելն այն անձի կողմից, որը նախկինում հանձնված է եղել հասարակական կազմակերպության կամ աշխատավորական կոլեկտիվի երաշխավորությանը (հոդված 36): Սույն ցանկը սպառիչ է եւ ենթակա չէ փարածական մեկնաբանության:

«Դատական պրակտիկայում,- նշում է ՆՆ գլխավոր դատախազ Ա. Գեորգյանը,- կան դեպքեր, երբ պափիժները մեղմացվում են Նայրենիքի հանդեպ ծառայություններ ունեցող, գիտական հայրնագործություններ ունեցող, արվեստի վարպետների ու այլոց նկատմամբ» («Ռեսպուբլիկա Արմենիա», 1993, 16 հուլիսի):

Իսկ ինչպիսին է դափարանազական պրակտիկան՝ Քրեական օ-

րենսգրքի 34-րդ, 35-րդ եւ 36-րդ հոդվածների պահանջները ապահովելու առումով:

Հանրապետության դափախագության պրակտիկայում, որոշ դեպքերում, անտեսվում են հանցագործության հանրորեն վրանգավոր բնույթն ու աստիճանը, մեղավորի անձնավորության վերաբերյալ փյալները եւ պարասխանափութությունը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները: Դափախագության կողմից դափական հսկողության կարգով Գերագույն դատարան են մտցվում բազմաթիվ հակահրավական բողոքներ՝ դատարանների դատավճիռներն ու որոշումները մեղմացնելու նպատակով: Ինչո՞ւ հակահրավական: Որովհետեւ այն հանգամանքները, որոնք մատուցվում են որպես մեղմացուցիչ, արդեն իսկ պարփո՞ւ նշանակելիս դատարանի կողմից հաշվի էին առնվել:

Հանրապետության գլխավոր դափախագ Ա. Գեւորգյանը Հարությունյանի վերաբերյալ գործով միջնորդել է (բերել է բողոք՝ դափական հսկողության կարգով) ՀՀ Գերագույն դատարանին, որպեսզի նրա նկատմամբ դատարանի նշանակած պարփո՞ւ իջեցվի երկու փարով:

Ժողովրդական դատարանը Հարությունյանին ծանր մարմնական վնասվածք հասցնելու եւ ապօրինի զենք կրելու համար (Քր. օր.-ի 105-րդ հոդ. 1-ին եւ 232-րդ հոդ. 2-րդ մասեր) դատապարտվել է ազատազրկման՝ 5 փարի ժամանակով:

Դատապարտյալը (1959 թ. ծնված) նախկինում երեք անգամ դատապարտված է եղել՝ 1974-ին ծանրացուցիչ հանգամանքներում կատարված գողության համար (Քր. օր.-ի 86-րդ հոդ. 2-րդ մաս), ազատվել է պայմանական վաղակեսի. 1985-ին՝ ծանրացուցիչ հանգամանքներում կատարված խուլիգանության (Քր. օր.-ի 222-րդ հոդ. 2-րդ մաս) եւ ծանրացուցիչ հանգամանքներում կատարված միլիցիայի աշխատողին դիմադրություն ցույց փալու համար (Քր. օր.-ի 207-րդ հոդ. 2-րդ մաս). 1986-ին՝ կրկին ծանրացուցիչ հանգամանքներում կատարված խուլիգանության համար: Ազատվել է 1989-ին: Դատվածությունը չմարված:

Մի այլ օրինակ: Նույնպես պարփո՞ւ երկու փարով պակասեցնելու համար նույնպես Հարությունյանի վերաբերյալ գործով գլխավոր դափախագը հսկողական կարգով բողոք է բերել: Մակայն, ի փարբերություն առաջին Հարությունյանի, երկրորդը դատված է եղել... 6 անգամ, դատարանը նրան ճանաչել է առանձնապես վրանգավոր ռեցիդիվիստ: Ներթական պարփո՞ւ կրելուց ազատվելով 1991 թ. մարտի 11-ին, նա արդեն ապրիլի 18-ին կատարում է նոր հանցագործություն:

Մանուկյանին, որը կատարել է դիփավորյալ սպանություն (Քր. օր.-ի 100-րդ հոդ.), դատարանը դատապարտել է 11 փարվա ազատազրկման:

Գլխավոր դափախազը դափական հսկողության կարգով բողոք է բերել Գերագույն դափարանի նախագահություն. որով խնդրել է մեղմացնել պարտազափը երկու փարով: Շարժառիթները հեփելյալն են՝ նախկինում դափված չի եղել, զբաղվել է հանրագուփ աշխափանքով, մեծահասակ է, փառափում է շաքարախփով, զաղութի աղմինիսափրացիան բնութագրում է դրական:

Հանցագործությունը կափարվել է հեփելյալ հանգամանքներում, փուժողի հեփ ունենալով ինփիմ հարաբերություններ, Մանուկյանը, խանդի հողի վրա, նախորդ իր հեփ բերված դանակով, հարվածել է փուժողի մեջքին, որը փեղում մահացել է: Հանցագործը սպանությունը կափարել է այն ֆաբրիկայի վարչական շենքի միջանցքում, որփեղ երկուսով աշխափել են: Գլխավոր դափախազ Ա. Գեորգյանը հաշվի երկուսով աշխափել են: Գլխավոր դափախազ Ա. Գեորգյանը հաշվի չի առել ինչպես արարքի հանրորեն վրանգավոր բնույթը (դասվում է անձի դեմ ուղղված ամենածանր հանցագործությունների շարքին, որի անմիջական օբյեկտը մարդու կյանքն է) ու հանցագործության հանրորեն վրանգավոր ասփիճանը (մարդու մահը), նույնպես եւ հանրապեփությունում դիփավորյալ սպանությունների փարածվածության փաստը:

1991-1995 թվականներին դիփավորյալ սպանության եւ սպանության փորձերի փեսակարար կշիռը հանցագործությունների ընդհանուր քանակի մեջ կազմել է. 1991-ին՝ 1,6 (13109-220), 1992-ին՝ 2,2 (16250-365), 1993-ին՝ 2,3 (13061-313), 1994-ին՝ 2 (9923-201), 1995-ին՝ 1,5 փոկոս (10140-159):

Իսկ ծանր հանցագործությունների (օրենսգրքի 7-րդ «պրիմ» հոդված) շարքում դիփավորյալ սպանությունները եւ սպանության փորձերը 1991-1995 թթ. համապափասխանաբար կազմել են 7,1 (3098-220), 7,6 (4758-365), 5,3 (5842-313), 6,9 (2890-201), 6,5 փոկոս (2444-159):

Ինչ վերաբերում է դիփավորյալ սպանությունների բացահայափմանը, ապա այսփեղ պափկերը հեփելյալն է. 1991-ին բացահայափվել է սպանությունների 63,7 եւ սպանության փորձերի 75 փոկոսը, 1992-ին (փասը ամիս)՝ 61,3 եւ 43,7, 1993-ին՝ սպանության եւ սպանության փորձերի 32,6 փոկոսը, այդ թվում սպանության փորձերի 41,5 փոկոսը, 1994-ին՝ համապափասխանաբար՝ 56,4 եւ 61,1, 1995-ին՝ 57 եւ 73,7 փոկոսը:

«ՀՀ Գերագույն դափարանի թրեական գործերի դափական կոլեգիայի կափարած աշխափանքների մասին» հաշվեկրփությունում (1994 թ.) նշվել է. «...Դափապարփյալների մեծ աճ է արձանագրվել ծանրացուցիչ հանգամանքներում կափարված դիփավորյալ սպանության գործերով: Եթե 1992 թ. այդ արարքի համար դափապարփվել էր

26 մարտ, այս 1993 թ. դրանց թիվը հասել է 83-ի: Ի դեպ, այս թիվը զգալիորեն գերազանցում է նաև 1986-1991 թթ. եղած բոլոր ցուցանիշները»:

1992 թվականին դադարակալ կուլեգիա առաջին արյանի կարգով մուտք եղած 196 քրեական գործերից (438 անձանց նկատմամբ) միայն 109-ով (55.6 տոկոս) է արձակվել դատավճիռ: Դատապարտվել է 211 մարդ կամ 45.6 տոկոսը (438-211): Իսկ 1993-ին 351 քրեական գործերից դատավճիռ է արձակվել միայն 202-ով, որը կազմում է 57.5 տոկոսը (351-202): Ընդ որում՝ 107 քրեական գործ (շուրջ 30,5 տոկոս) եղել են դիտարկող սպանությունների (հողվածներ 99 եւ 100), 113-ը (32,2 տոկոս)՝ խմբակային ավազակությունների վերաբերյալ (հողված 88, մաս 2-րդ): Ավազակության համար դատապարտված անձանցից (ավարտվել էր 62 գործ 98 մարդու նկատմամբ) 44-ը կամ 44,8 տոկոսը նախկինում եղել են դատված:

Ինչպես իրավագիտորեն նշվել է հաշվեկրթությունում, «Նասարակության համար առավել վրանգ ներկայացնող հանցագործությունների համար լիբերալ պարտողական պրակտիկայի իրականացումը բնականաբար է՛լ ավելի է սրում հանցածին իրավիճակը եւ նպաստում անպարտելիության մթնոլորտի խորացմանը»:

Այդ մասին է վկայում, օրինակ, Արմավիրի շրջանային դատարանում քրեական գործերով իրականացվող պարտողական պրակտիկան: Դատավոր Լ. Տիգրանյանի կողմից 1996 թ. հունվար-ապրիլ ժամանակահատվածում լսվել է 44 քրեական գործ, որոնցից 41-ը հետեւյալ կարեգորիաների՝ սեփականության դեմ ուղղված հանցագործություններ, անձի առողջության եւ ազատության դեմ ուղղված հանցագործություններ, փրանսպորտային հանցագործություններ, հասարակական անվտանգության, հասարակական կարգի եւ բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործություններ:

Այդ գործերով սահմանվել են նվազագույն, նվազագույնին մոտ եւ առավելագույնին մոտ պարտաչափեր:

Նվազագույն պարտաչափ է սահմանվել 27, նվազագույնին մոտ՝ 11 եւ առավելագույնին մոտ՝ 3 քրեական գործերով:

Դատապարտվել է 48 անձ: Դրանցից 31-ի նկատմամբ (64,5 տոկոս) սահմանվել են նվազագույն, 13-ի (27 տոկոս)՝ նվազագույնին մոտ եւ 3-ի նկատմամբ (8,3 տոկոս)՝ առավելագույնին մոտ պարտիժներ:

Այսպիսով, դատապարտյալների 91,6 տոկոսի նկատմամբ կիրառվել են մեղմ պարտիժներ (92,6 տոկոս քրեական գործերով):

Սեփականության դեմ ուղղված հանցագործությունների փեսակարար կշիռը կազմել է մոտ 40 տոկոս (16 գործ): Գույքի գողություն

է կարարել դարապարտյալների 43.7 փոկոսը (21 մարդ): ՄՄ Քրեական օրենսգրքի 86-րդ հոդվածով դարապարտված անձանց 66.6 փոկոսը ստացել է հարաբերական-որոշիչ սանկցիայի նվազագույնը, իսկ 23.8 փոկոսը՝ նվազագույնին մոտ պարժաչափը: Գողություն կարաված անձանց 90.4 փոկոսը ստացել է մեղմ պարիժներ:

Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ անպետել են գողության հանրորեն վրանգավոր բնույթն ու աստիճանը, մեղավորի անձնավորության վերաբերյալ փյալները, պարասխանարվությունը մեղմացնող ու պարասխանարվությունը ծանրացնող հանգամանքները, այն, որ դրա խոշոր եւ առանձնապես խոշոր չափերը դասվում են ծանր հանցագործությունների շարքը, եւ որ այդ հանցարեսակը փարաված է շրջանում:

Թեեւ գրեթե բոլոր դարավճիռների նկարագրական-պարճառաբանական մասում նշվել է. «Պարիժ սահմանելիս ժողդարարանը հաշվի առավ կարարված արարքի բնույթը, հասարակական վրանգավորության աստիճանը եւ հետեւանքը...», սակայն, ինչպես երեւում է սահմանված պարճաչափերից, այն կրել է ձեւական բնույթ:

Նույնը կարելի է ասել հանցագործության սուբյեկտին վերաբերող փյալների մասին:

Դարարանը խաչարոյանին Քր. օր.-ի 86-րդ հոդ. 4-րդ մասով նշանակել է նվազագույն պարճաչափի հետեւյալ պարճառաբանությամբ. «Պարիժ նշանակելիս ժողդարարանը հաշվի առավ... նաեւ ամբաստանյալի անձը բնութագրող փյալները, այն, որ ...գրնվել է հետախուզման մեջ, չի ընդունում կարարված արարքը»: Ավելացնենք, որ խաչարոյանը նախկինում եղել է դարված եւ հանցագործությամբ պարճառված վնասը (1800000 դրամ) չի վերականգնել:

Ոչ համաչափ պարիժ է սահմանվել Նովհաննիսյանի նկարմամբ: Մուրք գործելով քաղաքացու բնակարան, նա գողացել է 2454 դոլար (981600 դրամ): Այս անգամ մեղմ պարիժ նշանակելիս դարարանը «հաշվի առավ... այն, որ նա... հանրօգուտ աշխարանքով չի գրաղվել, հանցանքը կարարել է ակոհող օգրագործած վիճակում, որը ծանրացուցիչ հանգամանք է, փուժողի պարճառված նյութական վնասը չի վերականգնել...»:

Քրեական օրենսգրքի 86-րդ հոդ. 4-րդ մասով Շաիրազյանը դարապարտվել է 8 փարվա ազարագրկման՝ անձնական գույքի 25 փոկոսի բռնագրավմամբ: Պարիժ սահմանելիս դարարանը «հաշվի առավ կարարված արարքի բնույթը, հասարակական վրանգավորության աստիճանը, հետեւանքը, ինչպես նաեւ ամբաստանյալի անձը բնութագրող փյալները, որն ունի ընտրանիք, խնամքին պնչափահաս երեխաներ եւ իհարկե նախկինում երկու անգամ դարապարտված լի-

նելու հանգամանքը»: Մակայն դատավճռից չի երեւում, թե նախկինում ինչ հանցագործություններ է կատարել Շահբազյանը եւ երբ: Շահբազյանը «գերեզմանափոր թաղված հանգուցյալ Գարեգին Քոչարյանի գերեզմանի շուրջ շարված բազալտե եզրաքարերից, սյուներից գողացել է 194820 դրամի ընդհանուր արժողությամբ 9 հափ եզրաքար («բորոդուր») եւ հինգ հափ սյուն...»: Հատկանշական է, որ նույն շրջանային դատարանը ի դեմս դատարանի նախագահ Մ. Սիմոնյանի, 8 փարվա ազատազրկում է սահմանել Կամո Նովիաննիսյանի նկատմամբ, նույն արարքի համար, թեւ վերջինս դատված չի եղել:

Դատվածության՝ որպես պատասխանատվությունը ծանրացնող հանգամանքի անկատարման, երեւում է նաեւ Ենոքյանի եւ Վարդանյանի վերաբերյալ գործով, որոնք օրենսգրքի 86-րդ հոդ. 3-րդ մասով դատապարտվել են ազատազրկման՝ 7 փարի ժամանակով (սանկցիան՝ 3-ից 8 փարի ազատազրկում):

Ենոքյանը նախկինում դատված է եղել երեք անգամ՝ 1965 թ. ծնված, նա 1981-ի հոկտեմբերի 28-ին դատապարտվել է օրենսգրքի 86-րդ 1-ին մասով 1 փարվա ազատազրկման, ազատվել է 1982 թ. օգոստոսի 30-ին. 1990 թ. ապրիլի 4-ին՝ 214-րդ հոդ. 1-ին մասով («Ձինապարտի խուսափելը վարժական կամ ստուգողական հավաքներից») ուղղիչ աշխատանքների՝ մեկ փարի ժամանակով. 1991 թ. հունիսի 20-ին ծանրացուցիչ հանգամանքներում կատարված կողոպուտի համար (144-րդ հոդ. 2-րդ մաս) ստացել է առավելագույն պարիժ՝ 7 փարի ազատազրկում, ազատվել է 1995 թ. մարտի 20-ին: Խնամքին ոչ ոք չունի, չի աշխատել: 1995 թ. հոկտեմբերի 30-ին նա կատարել է նոր հանցագործություն եւ դարձյալ դատապարտվել 7 փարի ազատազրկման: Դատարանն անկատար է նաեւ Քրեական օրենսգրքի 38-րդ հոդվածի («Մի քանի դատավճիռներով պարիժ նշանակելը») պահանջները. «Եթե դատապարտյալը դատավճիռ կայացնելուց հետո, բայց մինչեւ պարժի լրիվ կրումը, նոր հանցագործություն է կատարել, դատարանը, ղեկավարվելով օրենսգրքի 39-րդ հոդվածում սահմանված կանոններով, նոր դատավճռով նշանակված պարժին լրիվ կամ մասնակիորեն միացնում է նախորդ դատավճռով նշանակված պարժի չկրած մասը»:

Վարդանյանը նույնպես երեք անգամ դատված է եղել՝ 1961 թ. ծնված, նա 1984 թ. օգոստոսի 28-ին 114-րդ հոդ. 2-րդ մասով դատապարտվել է ազատազրկման, սակայն Քր. օր.-ի 42-րդ հոդվածի կիրառմամբ դատավճռի կատարումը հետաձգվել է. 1989 թ. հունվարի 27-ին՝ օրենսգրքի 105-րդ հոդ. 1-ին եւ 222-րդ հոդ. 1-ին մասերով 7 փարվա ազատազրկման, ազատվել է 1990-ի փետրվարի 3-ին. 1992 թ.

օգոստոսի 1-ին չարախոսվել է 3 փարի ժամանակահոդ. 2-րդ մաս) դադարապարսկել է ազադագրկման՝ 3 փարի ժամանակակով: Խնամքին ոչ ոք չունի. չի աշխարել: Ազադվել է 1995 թ. մայիսի 2-ին:

Դադարանը Դավթյանի վերաբերյալ գործով «հաշվի առավ կադարված արարքի հասարակական վրանգավորության աստիճանը, հեքուանքը, ինչպես նաեւ ամբաստանյալի անձը բնութագրող փվյալները եւ այն փաստը, որ նա է կազմակերպիչը ու պարասխանարվորթյունից խուսափելու նպարակով թաքնվել է քննությունից, գրնվել է հեքախուզման մեջ...» եւ օրենսգրքի 86-րդ հոդ. 3-րդ մասով նշանակեց մեղմ պարժաչափ (4 փարի):

Դադարանը Ոսկանյանի, Տարությունյանի եւ Մկրտչյանի վերաբերյալ գործով հիմնավորված է համարել հեքելյալը.

1995 թ. օգոստոսի վերջին ՏՆ ՆԳՆ ներքին գորքերի վարչության 1043 գորամասի գինձառայող, գործով ամբաստանյալ Ոսկանյանը, գրնվելով ձառայության մեջ Տայկական արոմակայանի ռեակտորների արտադրամասում, հանդիպել է այդ արտադրամասի օպերարոր, գործով մյուս ամբաստանյալ Մկրտչյանին եւ առաջարկել կծու կալիումի գողություն կարարել: Մերծում սրանալով՝ Ոսկանյանն այդ օրը չի կարողացել իրականացնել իր հանցավոր մարդրությունը:

Երկու օր անց գրնվելով վերակարգում որպես պահակ, նյութական արժեքները պահպանելու փոխարեն, օգրվել է արտադրամասի օպերարորի բացակայությունից, մուքք գործել եւ արտադրամասից գողացել չորս փակառ, յուրաքանչյուրը 50 կգ քաշով, առանձնապես խոշոր չափերի հասնող կծու կալիում, 215294 դրամ արժողությամբ, եւ 5500 դրամ ընդհանուր արժողությամբ երեք հակահրդեհային խողովակներ:

1995 թ. դեկտեմբերի 10-ի լույս 11-ի գիշերը դարձյալ գրնվելով վերակարգում, ժամը 17-ի սահմաններում Ոսկանյանը մոքեցել է վերակարգում գրնվող ձայնային ազդանշանային համակարգի վրա որպես օպերարոր նշանակված, գործով մյուս ամբաստանյալ Տարությունյանին եւ առաջարկել գորամասի հագուստի պահեստից գողություն կարարել:

Տարությունյանը սկգբից հրաժարվել է, սակայն այնուհեքել փեղի է փվել, անջարել է ձայնային ազդանշանի համակարգը, որով հնարավորություն է փվել Ոսկանյանին կոքրել պահեստի դուռը եւ գողություն կարարել: Ոսկանյանը գողացել է առանձնապես խոշոր չափերի հասնող 433400 դրամ արժողությամբ գինվորական հանդերձանք:

Արդյունքում՝ Ոսկանյանին նշանակվել է նվազագույն պարժաչափ. օրենսգրքի 86-րդ հոդ. 4-րդ մասով՝ 6 փարի ազադագրկում, իսկ

263-րդ հոդ. «գ» կետով («Պահակային ծառայության կանոնագրքի կանոնների խախտում»)՝ 3 փարի (սանկցիան 1-ից 10 փարի): Նարու-թյունյանի նկատմամբ սահմանվել է համապատասխանաբար՝ 6 եւ 2 փարի ազատազրկում:

Դատարանն անուշադրության է մատնել Քր. օր.-ի 36-րդ հոդվածով նախատեսված հետեւյալ ծանրացուցիչ հանգամանքները՝ հանցագործությունը կազմակերպված խմբի կողմից կատարելը. հանցագործությունը շահադիպական դրդումներով կատարելը. հանցագործությամբ ծանր հետեւանքներ պատճառելը. հանցագործությունը հանրության համար վտանգավոր եղանակով կատարելը:

Ջանիբեկյանի վերաբերյալ քրեական գործից երեւում է, որ նա 1995 թ. հունիսի 11-ին դատապարտվել է օրենսգրքի 229-րդ հոդ. 3-րդ մասով մեկ փարվա ազատազրկման, եւ 1995 թ. համաներման ակտով ազատ է արձակվել: Ինչպես նշվել է դատավճռում, նա «որեւէ հետեւություն չի արել եւ շարունակել է նախկին կյանքով ապրել, այսպես՝ նա առանց վաճառելու նպատակի, գործածելու համար ապօրինաբար ձեռք է բերել, պահել է 0,23 գրամ «ացեփիլացված» ափիոն փեսակի թմրամիջոց...»:

Պատասխանատվության կանչված որպես մեղադրյալ (1996 թ. հունվարի 12-ին) Ջանիբեկյանը Քր. օր.-ի 229-րդ հոդ. 4-րդ մասով առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր չի ճանաչել, պատճառաբանել է, որ իր մոտ եղած բժշկական ներարկիչի մեջ լցված է եղել... քացախաթթու: «Ամբաստանյալ Ս. Ջանիբեկյանի նմանօրինակ պատճառաբանություններն անհիմն են,- նշվել է դատավճռում,- հետապնդում են պատասխանատվությունից խուսափելու նպատակ եւ հերքվում են քրեական գործով ձեռք բերված... ապացույցներով»: Եվ այնուամենայնիվ, դատարանը Ջանիբեկյանի նկատմամբ սանկցիայի առավելագույն չափը չի կիրառել:

Մինչդեռ թմրամուլությունը շրջանում ունի մեծ փարածում: Միայն դատավոր Լ. Տիգրանյանի կողմից չլսված գործերի ցանկում (առ 3.Վ.96) 229-րդ հոդ. 3-րդ եւ 4-րդ մասերով գործերի քանակը կազմել է 30 փոկոս (նույնքան է եւ գողության վերաբերյալ գործերի փեսակարար կշիռը): 1995 թվականին շրջանային դատարան մուտք եղած 192 քրեական գործերից 60-ը կամ 31.2 փոկոսը թմրամուլության վերաբերյալ էին:

Ըստ Քրեական օրենսգրքի, հնարավոր է նաեւ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակել, եւ այդ դրույթը ձեւակերպված է այսպես. «Դատարանը հաշվի առնելով գործի բացառիկ հանգամանքներն ու հանցավորի անձնավորությունը եւ գտնելով, որ անհր:սժեշտ է նրա նկատմամբ փվյալ հանցագործության համար օ-

րենքով նախատեսված պատժի նվազագույն չափից ավելի ցածր պարիժ նշանակել կամ անցնել մեկ այլ՝ ավելի մեղմ պատժատեսակի կարող է թույլ փակ այդպիսի մեղմացում, պարտադիր կերպով մատնանշելով դրա շարժառիթները» (հոդված 40):

Ի փարբերություն «մեղմացնող» եւ «ծանրացնող» հանգամանքների, օրենսդիրը չի ճշգրտում «բացառիկ» հանգամանքները: Մակայն հասկանալի է, որ վերջիններս պատասխանաբարվությունը մեղմացնող հանգամանքների շարքում պետք է լինեն իսկապես բացառիկ, կազմեն բացառություններ: Եվ այդ քրեաիրավական նորմին պետք է փրվի ոչ թե փարածական, այլ՝ սահմանափակ մեկնաբանություն: Չի կարելի, օրինակ, վնասի հապուցումը համարել ե՛ր մեղմացնող, ե՛ր բացառիկ հանգամանք: Նույնիսկ հանցագործությունը անձնական կամ ընդհանրական ծանր հանգամանքների գուգորդման հետեւանքով կատարելը, հանցագործությունը փուժողի անօրինական գործողությունների հետեւանքով առաջացած հոգեկան խիստ հուզմունքի ազդեցության փակ կատարելը, հանցագործությունը հղի կնոջ կողմից կատարելը, հանցագործությունը հանրորեն վրանգավոր ոչնձգությունից պաշտպանվելիս կատարելը, թեկուզեւ անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցումով, եւ այլն համարվում են «մեղմացուցիչ», այլ ոչ թե «բացառիկ» հանգամանքներ: Այսպիսով, պատասխանաբարվությունը մեղմացնող եւ բացառիկ հանգամանքները նույնանման հասկացություններ չեն, թեկուզ այն պատճառով, որ գեպեղված են Քրեական օրենսգրքի փարբեր հոդվածներում:

Խոսքը ոչ թե սովորական «մեղմացնող» հանգամանքների մասին է, այլ այնպիսի հանգամանքների, որոնք էապես մեղմացնում են պատասխանաբարվությունը, խիստ նվազեցնում արարքի հանրորեն վրանգավոր բնույթն ու ասպիճանը: Եվ ամենակարեւորը՝ իրենց նշանակությամբ «բացառիկ» հանգամանքները պետք է դուրս լինեն այն շրջանակներից, որոնց մասին հիշատակվում է Քրեական օրենսգրքի 35-րդ հոդվածում: Թերեւս որպես «բացառիկ» հանգամանք կարելի է որակել «մեղմացուցիչ» մի շարք հանգամանքների համակցությունը:

Մինչդեռ դատախազության կողմից Գերագույն դատարան բերված բողոքները՝ օրենսգրքի 40-րդ հոդվածը կիրառելու առումով, չեն բխել օրենքի պահանջներից, եւ դրանց հիմքում ընկած մեղմացուցիչ հանգամանքները մատուցվել են որպես «բացառիկ»: Ընդ որում՝ բողոքները վերաբերում են այն անձանց, որոնց նկատմամբ դատարանն արդեն իսկ կիրառել է պատժի անհարականացման սկզբունքը, հաշվի է առել ինչպես պատասխանաբարվությունը մեղմացնող, նույնպես եւ պատասխանաբարվությունը ծանրացնող հանգամանքները:

Դադարական պրակտիկայում պատասխանավորությունը մեղմաց-
նող հանգամանքներ են համարվում, օրինակ, անձի անբասիր վարքը
և միևնույն հանցագործություն կատարելը, նրա արտադրական ու հաս-
արակական գործունեությունը եւ այլն: Պատժի տեսակի ու չափի ընդ-
արության վրա ազդեցություն են գործում եւ այնպիսի հանգամանքներ,
մեղմացիկ են՝ մեղավորի հիվանդությունը, նրա մեծահասակ լինելը,
մախնամքի տակ փոքրահասակ կամ անչափահաս երեխաներ ունենալը,
մեղմամբանի անդամների անաշխատունակ լինելը եւ այլն: Իսկ դատա-
խազական պրակտիկայում դրանք հանդես են գալիս որպես բացա-
ռիկ հանգամանքներ, որը եւ հակասում է օրենսգրքի 35-րդ եւ 40-րդ
տիպի վաճառների իմաստին ու բովանդակությանը:

Դա հանգեցրել է նրան, որ մի շարք անձանց, որոնք կատարել են
անձանր հանցագործություններ (օրենսգրքի 71 հոդված), նշանակվել է
օրենսգրքով նախատեսվածից ավելի մեղմ պատժ: Օրինակ՝ Բասմաջա-
րլինին, որը «առանձնապես խոշոր չափը» 15 անգամ գերազանցող
ստիպիչություն է կատարել, Մահակյանին, որը հափշտակել է
838909 լիտր բենզին, Կարապետյանին՝ ծանրացուցիչ հանգամանքնե-
րում կաշառք ստանալու համար, Նակոբյանին՝ ակնհայտ հղի վիճա-
րվում գտնվող կնոջ սպանության փորձի համար, եւ այլն:

Դատախազության այսպիսի դիրքորոշումը հակասում է պատժի
նշանակման ընդհանուր սկզբունքներին, չի նպաստում արդարադա-
տության իրականացմանը:

Ինչ վերաբերում է Գերագույն դատարանին, ապա իր գործունեու-
թյան սկզբնական շրջանում հանրապետության դատական բարձրա-
ագույն արյանը ճիշտ է ընկալել «մեղմացնող», «բացառիկ» եւ «ծան-
րացնող» հանգամանքների բովանդակությունն ու իմաստը:

Այսպես, 1991 թ. փետրվարի 15-ին դատապարտյալներ Պեպրո-
ւյանի ու Իսրայելյանի վճռաբեկ գանգափի կապակցությամբ (եր-
կուսն էլ մեղավոր են ճանաչվել Օրենսգրքի 86-րդ հոդ. 4-րդ մասով եւ
դատապարտվել 5 տարվա ազատազրկման) դատական կոլեգիան
նշել է. «Դատապարտյալների այն պարճառաբանությունները, որ ի-
րենք նախկինում արտավորված չեն եղել, բնութագրվում են դա-
պարտանապես, ունեն անչափահաս երեխաներ, պարճառված վնասը ամ-
բողջությամբ վերականգնվել է՝ դատավճիռը Քր. օր.-ի 40-րդ հոդվա-
ծի կիրառմամբ մեղմացնելու սահմանված պատիժը հիմք հանդիսա-
նալ չի կարող. քանի որ ժողդատարանը պատիժը սահմանելիս նշված
մեղմացուցիչ հանգամանքներն արդեն իսկ հաշվի է առել եւ համա-
պատասխան պատիժ է սահմանել նրանց նկատմամբ»:

Եվ դատարանը, յուրաքանչյուր դեպքում օրենսգրքի 40-րդ հոդվա-
ծը կիրառելիս, պետք է ղեկավարվի դատական կոլեգիայի կողմից

արձակված այս որոշման պահանջներով, որում փրված է սկզբունք
րեն ճիշտ դատական մեկնաբանություն:

Վերջում ավելացնենք, որ Քրեական օրենսգրքում կանոնակարգ
ված են նաեւ բժշկական եւ դատարարական բնույթի հարկադրա
կան միջոցների կիրառման հարցերը՝ հոգեկան հիվանդների նկատ
մամբ կիրառվող բժշկական բնույթի հարկադրական միջոցները, հո
գեբուժական հիվանդանոցում փեղավորելը, հոգեկան հիվանդների
նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցների կիրառում
նշանակելը, փոփոխելը եւ դադարեցնելը, բժշկական բնույթի այն
հարկադրական միջոցները, որ կիրառվում են հանցագործություն
կատարած խրոնիկական ակոհոլիկ կամ թմրամոլ ճանաչված ան
ձանց նկատմամբ, անչափահասների նկատմամբ կիրառվող դատ
արարական բնույթի հարկադրական միջոցները: